

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Սովետական Հայաստանի գիտական հաստատությունների թիվը վերջերս ավելացավ ևս մեկով:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի և Գիտությունների ակադեմիայի նախագահության որոշմամբ Պատմության ինստիտուտից անջատվելով ստեղծվեց Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, իբրև Գիտությունների ակադեմիայի կազմի մեջ մտնող ինքնուրույն գիտական հաստատություն:

Նորաստեղծ ինստիտուտը իրականացնելու է Սովետական Հայաստանի թե՛ հնագիտական, և թե՛ ազգագրական ուսումնասիրությունը: Այդ նպատակով նա պետք է կազմակերպի հնագիտական, վիճաբանական և ազգագրական արշավախմբեր, կատարի պեղումներ, դաշտային աշխատանքներ, հավաքի արձանագրական և ազգագրական նյութեր, որոնք պետք է մշակվեն, ուսումնասիրվեն և հրապարակվեն:

Այդ խնդիրների հաջող իրականացման նպատակով ինստիտուտում ստեղծվել են վաղ հնագիտության, հին և միջնադարյան հնագիտության, վիճագրության և ազգագրության սեկտորներ, ինչպես և նյութերի մշակման ու վերականգնման, մարդաբանության կարիքները բուսականաբանական լաբորատորիա:

Հայաստանը հարուստ է նյութական կուլտուրայի տարրեր դարաշրջանների հուշարձաններով, որոնցից շատերը մշակույթային և պատմա-հնագիտական մեծ արժեք ունեն ոչ միայն նրանով, որ մարմնացում են մի ժողովրդի աշխարհային ստեղծագործական տաղանդի, այլև նրանով, որ դրսևորում են Հայաստանի հնագույն բնիկների և հալ ժողովրդի մշակույթային կապերը Կովկասի, Հին Արևելքի, հելլենիստական աշխարհի, Մերձավոր Արևելքի և արաբական ու բյուզանդական երկրների մշակույթի հետ: Ինստիտուտի հնագետները ուսումնասիրելու են բարե դարի, բրոնզե դարի, վաղ երկաթի, ուրարտական ժամանակաշրջանի, հին Հայաստանի, Միջնադարյան Հայաստանի հնավայրերն ու հուշարձանները:

Հայաստանի վիճագիր արձանագրությունների ուսումնասիրության առանցքը կազմելու են հայերեն արձանագրությունները, որոնք անգնա-

հատելի նյութեր են պարունակում միջնադարյան Հայաստանի հասարակական-տնտեսական և մշակույթային կյանքի վերաբերյալ: Դրան զուգահեռ ինստիտուտը պետք է ուսումնասիրի նաև ուրարտական սեպագիր արձանագրությունները և վաղ հայկական շրջանի արամեերեն, հուրարեն և լատիներեն արձանագրությունները:

Հայ ժողովուրդը հարուստ է նաև յուրահատուկ նկարագիր ունեցող ազգագրական խմբերով: Ինստիտուտի ազգագրագետները ուսումնասիրելու են այդ ազգագրական խմբերը, Հայաստանի գյուղերն ու բաղարները, ինչպես և հայաշատ բնակավայրերը սովետական մյուս ԽՍՀՄ-ի կոմունիստներում, նպատակ ունենալով պարզել բնակչության արտադրական, հասարակական, բնտանական, կենցաղի, սովորույթների ու լոբրոնումների զարգացումը և դրանց մեջ տեղի ունեցող փոփոխությունները: Հատուկ ուշադրություն պետք է նվիրվի հնամենի, հնադարյան և սովորույթների, սնտիապաշտական ու կրոնական հասկացությունների էության բացահայտմանը և դրանց դեմ մղվող պայքարի հարցերին:

Ազգագրագետների աշխատանքներում առանձին տեղ է զբաղեցնում Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղի և սոցիալիստական բաղադրի բնակչության նոր կենցաղի ուսումնասիրությունը:

Ինստիտուտը պետք է կատարի հնագիտական, վիճագրական և ազգագրական նյութերի մշակումը և գիտական ուսումնասիրությունը գիտության մեջ կիրառվող նորագույն մեթոդներով և հրատարակության պատրաստի արշավախմբերի հաշվետվությունները, ժողովածուներ առանձին հարցերի նվիրված, ինչպես և բնդհանրացնող գիտական աշխատություններ:

Ինստիտուտի գլխավոր խնդիրներից մեկն էլ հանդիսանալու է հնագիտական և ազգագրագիտական նոր կաղերի պատրաստումը:

Նորաստեղծ ինստիտուտը սույն 1959 թ. հուլիսի 1-ից անցավ իր աշխատանքների կատարմանը, արդեն գործում են Կարմիր-բուրի, Արին-բերդի, Շենգավիթի, ինչպես և վիճագրական, ազգագրական արշավախմբերը: Նախապատրաստվում են հնագիտական մյուս արշավախմբերի աշխատանքները:

ԱՐԱՐԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Նրանական թվականներին Հենինգրադում կայացել են արաբագետների առաջին (1935) և երկրորդ (1937) նստաշրջանները, և ահա երկար ընդմիջումից հետո, սույն թվի մայիսի 11—16-ը Հենինգրադում կայացավ արաբագետների Համամիութենական առաջին խորհրդակցությունը, որը կարևոր իրադարձություն էր արաբագիտության բնագավառում: Սա տարբերվում էր 30-ական թվականների նստաշրջաններից նրանով, որ եթե նախկինում կարգացվել է լոկ մի քանի զեկուցում, ապա այս անգամ դրվել էր մոտավորապես 80 զեկուցում:

Խորհրդակցության նախագահն էր ակադեմիկոս Հովսեփ Սրբելին, որը բաց անկող խորհրդակցությունը մասնակիցներին հրավիրեց հոտնկայս հարգել մեծանուն արաբագետ Ի. Կրաչկովսկու (1883—1951) հիշատակը: Նա նշեց, որ այս խորհրդակցության նպատակն է, նախապատրաստվել 1960 թ. Հենինգրադում կայանալիք արևելագիտական համաշխարհային համագումարին:

Կարգացված զեկուցումները, բոտ նյութի, կարելի էր բաժանել հետևյալ խմբերի՝ պատմություն (հին և նոր) և տնտեսագիտություն, դրականագիտություն, աղբյուրագիտություն ու ձեռագրերի ուսումնասիրություն և լեզվաբանություն (սեմագիտություն և արաբագիտություն): Զեկուցողներ կային հիմնականում Հենինգրադից, Քրիլիսից և Մոսկվայից, ինչպես նաև Տաշքենտից, Բարվից և Երևանից:

Միջնադարյան պատմության գծով կարգացված զեկուցումները վերաբերում էին թե՛ Անդրկովկասի ու Միջին Ասիայի երկրների արաբական շրջանին և թե՛ ընդհանրապես բուն խալիֆայության պատմության հարցերին: Նոր պատմության ենթաբաժնի մեջ մտնող զեկուցումների մեծամասնությունը քննության էր առնում ժամանակակից պատմությունը, կանգ առնելով մասնավորապես Եգիպտոսի նորագույն շրջանի հարցերի վրա:

Դրականագիտական զեկուցումները թվով քիչ էին և վերաբերում էին թե՛ միջնադարյան և թե՛ նոր և նորագույն շրջանի դրականությունը՝ Եգիպտոսում և այլ արաբական երկրներում:

Ձեռագրերի և աղբյուրագիտության բաժնում կարգացվեցին զանազան քաղաքներում (Հենինգրադ, Տաշքենտ, Կադան, Քրիլիսի, Երևան և Բարու) գտնվող արաբական ձեռագրերի նկարագրության նվիրված հաղորդումներ: Արաբական ձեռագրերի մեծագույն և ամենաարժեքավոր հավաքածուները (մեր Միության մեջ)

գտնվում են Հենինգրադում և Տաշքենտում: Երեւանի Մատենադարանի արաբական ձեռագրերը, թեպետ և թվով քիչ են (մոտավորապես 230), այնուամենայնիվ կան որոշ արժեք ներկայացնող ձեռագրեր:

Խորհրդակցության ժամանակ կարգացվեցին զեկուցումներ նվիրված առանձին ձեռագրերի (մանավանդ Հենինգրադի) ուսումնասիրման, որոնց մեջ պետք է նշել Լ. Պիսարևսկու զեկուցումը՝ «Հայաստանը, Ատրպատականը և Աղվանքը ալ-Իդրիսիի նուգհատ ալ-Մուշուկ ֆի իխտիրակ ալ-Աֆակ աշխատության մեջ (XII դ.)»: Ալ-Իդրիսիին արաբների մեծագույն աշխարհագիրներին է, որի աշխատության արաբերեն բնագիրը դեռ մինչև այսօր մնում է ձեռագիր վիճակում և դիտական աշխարհը իր տրամադրության տակ ունի լոկ նրա ֆրանսերեն թարգմանությունը: Զեկուցողը այժմ ձեռքի տակ ունենալով ալ-Իդրիսիի թե Հենինգրադի, թե Արևմտյան Եգիպտոսի ու Կոստանդնուպոլսի ձեռագրերի այն հատվածը, որը վերաբերում է Հայաստանին, Ատրպատականին և Աղվանքին, այն հրատարակության է պատրաստել ռուսերեն թարգմանությամբ:

Հայագիտության համար մեծ հետաքրքրություն էր ներկայացնում նաև հայտնի դրամագետ Ա. Բիկովի «Դայսամ իրն Իրրահիմի դրամները (X դ.)» զեկուցումը: Դայսամը X դարում Ատրպատականում իշխող ամիրաներից մեկն էր, որի՝ Դվինում և այլուր հատած արաբատառ դրամները մեծ նշանակություն ունեն որոշելու համար այդ դարի պատմության որոշ հարցեր: Ա. Բիկովը դեռ մի քանի տարի առաջ հրատարակել էր մի ընդարձակ հոդված «Դայսամ իրն Իրրահիմ բուրդը և նրա դրամները» (Эпиграфика Востока. X, 1955), որի մեջ քննության է առնում Դայսամի 330 (941/42) թ. Դվինում հատած մի դրամը և նրա հիման վրա որոշում է այդ ժամանակ Դվինում տիրող քաղաքական կացությունը, ընդ որում մանրամասն նկարագրելով Դայսամի հարաբերությունները Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու հետ: Խորհրդակցության ժամանակ կարգացած զեկուցման մեջ Ա. Բիկովը նկարագրեց նույն Դայսամի Ատրպատականում հատած մի քանի դրամներ, որոնք վերջերս են գտնվել:

Զեկուցումների մեծ քանակը թույլ չէր տալիս ամեն մի զեկուցման մասին բանավեճ ծավալել, այնուամենայնիվ եղան զեկուցումներ, որոնք տար բանավեճի նյութ դարձան: Դրանք լեզվաբանական երկու զեկուցումներ էին: Առաջինը Հ. Գաբուշյանի (Մոսկվա) զեկուցումն էր

«Զրո հողը (արտիկլ) արարելենում», որի մեջ գեկուցողը պաշտպանում էր այն միտքը, թե արարելենում գոյություն ունի ոչ միայն որոշիչ (ալա նախադաս) և անորոշ (սեուս) ետադաս) հող, այլև գոյություն ունի մի վիճակ, երբ գոյականը չի ունենում ոչ մի վերջավորություն (սա կոչվում է զրո վերջավորություն), սակայն, ըստ շարահյուսության, նա ունենում է որոշիչ կամ անորոշ հողի իմաստ: Ահա սա կոչվում է «զրո հող»: Չնայած շատերի առարկություններին, զեկուցման մեջ հայտնված նյութը որոշ հավանության արժանացավ լեզվաբանների կողմից:

Երկրորդ զեկուցողը, որը մտքերի փոխանակության առիթ տվեց, Ջարինազադեն էր (Բարու) իր՝ «Արարելենի բառարաններ կազմելու արմատական և այլուրենական սիստեմներ» զեկուցմամբ: Այս հարցը այնքան այժմեական է և կարևոր, որ հենց զեկուցման վերնադիրը աշխույժացրեց ունկնդիրներին: Բանը նրանումն է, որ մինչև այսօր արարելենի բառարանները կազմվում են միայն արմատական ձևով, այսինքն բառերը դասավորելիս նկատի են ունենում միայն արմատները, իսկ ածանցված բառը բառարանում դասավորվում է իր արմատի տակ: Այսպես են կազմվել բառարանները հին արարելենի մոտ և այսպես են կազմվում նաև այսօր բոլոր արաբական բառարանները բոլոր երկրներում: Այսուամենայնիվ եղել են սոսկ այլուրենական ձևով բառարան կազմելու որոշ փորձեր, օրինակ՝ զերմանացի գիտնական Վարմուդը XIX դարի վերջում կազմել է երկհատորանոց մի ընդարձակ բառարան (արարելեն-գերմաներեն), նկատի ունենալով բառերի սոսկ այլուրենական հաջորդականությունը: Տարբանավեհից հետո խորհրդակցության մասնակից որոշ զեկուցողներ հանեցին մի այսպիսի ընդհանուր եզրակացություն՝ ի՞նչ բառարան կազմվում է դասական արարելենի բառապաշարի համար. ապա պետք է անպայման առաջնորդվել հին ձևով, իսկ ի՞նչ բառարանը ընդգրկում է

լեզվի այժմյան բառապաշարը, ապա կարելի է կազմել թե՛ հին ձևով և թե՛ վարմունդի կազմած եղանակով: Այս հարցը մեզ համար կարևոր է նրանով, որ այժմ Հայաստանի Գիտությունների ակադեմիայում արդեն կազմվում է արարելեն-հայերեն մի բառարան, որի հեղինակները առաջնորդվում են այբբենական սկզբունքով:

Սեմագիտական բնագավառի զեկուցումները ընդգրկում էին երբայական, ասորական և էթովպական բանասիրության զանազան հարցեր՝ ինչ լեզվաբանական և թե՛ մատենագրական:

Հայաստանից զեկուցումով հանդես է եկել Ա. Տեր-Ղևոնդյանը (Արարական ամիրայություններ Հայաստանում IX—XI դդ.), որը կարգաց նաև մի հաղորդում («Երևանի Մատենադարանի արարելեն ձևագրերը»):

Խորհրդակցության ժամանակ պարզվեց Միություն տարրերը բաղադրելու գոյություն ունեցող արաբագիտական կենտրոնների խսկական արժեքը: Որինակ, Ռուսաստանի արաբագիտական կենտրոններին (Լենինգրադ և Մոսկվա) հավասար աչքի ընկավ վրաց արաբագիտների խումբը: Եվ դա պատահական չէ, որովհետև արդեն մոտ երեսուն տարի է, որ շնորհիվ հայտնի արաբագետ ակադեմիկոս Գ. Մերեթյուցանյանի, Քրիլիսի համալսարանի սեմագիտության և արաբագիտության լուրջ կենտրոն է հանդիսանում:

Ցավոք, պետք է նշել, որ մեզ մոտ Հայաստանում, թեպետ և կան բոլոր տվյալները արաբագիտության, ինչպես և սեմագիտության զարգացման համար, այսուհանդերձ մենք ետ ենք մնում այդ բնագավառներում: Ասորական և արաբական բանասիրությունը կարևոր նշանակություն ունի միջնադարյան Հայաստանի ուսումնասիրման համար: Սեմագիտությունը և արաբագիտությունը կարող են նպաստել ոչ միայն հայագիտության հետագա զարգացման, այլև հիմք կհանդիսանան Հայաստանում ընդհանուր արևելագիտության զարգացման համար:

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՆԴՈՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Ժամանակակից Եվրոպայում հայագիտությունը շուրջ այն փալլը, որ ունի անցյալ դարի վերջում և մեր դարի սկզբում, այնուամենայնիվ համաշխարհային երկրորդ պատերազմից հետո Եվրոպական գիտական շրջաններում հայագիտության նկատմամբ նկատվում է որոշ աշխույժություն և հետաքրքրություն, որն արժանի է ուշադրության:

Այս տեսակետից ուշագրավ երևույթներից մեկը պետք է նկատել Լոնդոնի համալսարանի Արևելյան և Աֆրիկյան հետազոտությունների դպրոցում (School of Oriental and African Studies) հայագիտության գրաված տեղը արևելագիտական այլ ճյուղերի շարքում:

Այս դպրոցը հին պատմություն չունի: XIX դարում արևելագիտական առարկաները ի-

միջիայնոց դասավանդվել են Լոնդոնի համալսարանի հասարակական գիտությունների բաժիններում և միայն մեր դարի սկզբին (1907) էլ, որ ձեռնարկվում է համալսարանին ուղղված բաց անել արևելագիտական հատուկ դպրոց: Դպրոցն իր դռները բաց է անում սովորողների առաջ միայն 1917 թ., ունենալով տեսուչ արևելագետ Բենիսոն Ռոսին:

Դպրոցի Մերձավոր և Միջին Արևելքի բաժնում է հայագիտությունը, որի դասավանդումը կապված է մի կողմից վրացական բանասիրության և մյուս կողմից իրանական բանասիրության հետ: Դասավանդվում են հետևյալ հայագիտական առարկաները՝ գրաբար, արևմտահայերեն, արևելահայերեն, ներածություն հայկական դասական գրականության, հայերենի շարահյուսություն և թարգմանություն, պատմություն հայկական դասական գրականության և հայոց լեզվի պատմություն:

Հայագիտության դասախոսն է պրոֆ. Դովսենթ (փիլ. դոկտ.), որն իր հայագիտական կրթությունն ստացել է Փարիզում: Նա ոչ միայն դասավանդում է, այլև զբաղվում է գիտական ուսումնասիրություններով, որոնց արդյունքները նա հրատարակում է Դպրոցի Հանդեսում:

(Bulletin of the Sch. of Or. and Afr. St.), որ հոդվածներից մեկում՝ «Մի մոռացված հատված լեզվաբանից Պատմության մեջ»¹, նա քննության է առնում Կաղանկատվացու Պատմության այն հատվածը, որը նրա հին հրատարակության մեջ բաց է թողնվել և հրատարակված է խաչիկ վարդապետ Դադյանի կողմից («Արարատ», 1897): Հեղինակը տալիս է գրաբար բնագիրը. ապա անգլերեն թարգմանությունը և մեկնաբանում է բովանդակությունը: Բացի սրանից, նա հրատարակության է պատրաստել Կաղանկատվացու Պատմության անգլերեն թարգմանությունը:

Նարունակելով իր պրպտումները Աղվանից պատմության բնագավառում, Դովսենթը մի այլ հոդվածում քննության է առնում Մխիթար Գոշի՝ Աղվանից կաթողիկոսների ցուցակը², որը մատենագիրը զետեղել է իր Դատաստանագրքի վերջում:

Վարեոր է նշել, որ ժամանակակից եվրոպական հայագիտությունը կարող է զարգանալ. եթե սերտ կապի մեջ լինի Երևանի հայագիտական կենտրոնների հետ:

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՀԱՅԱԿԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՏԱՐ ԼԵՂՈՒՆԵՐՈՎ

I. Muyldermans, Les homelies d'Eusebe d'Emese en version armenienne (Cod. Ven. Mech., 1706) (Եվսեբիոս Եմեսացու ճառերի հայերեն թարգմանությունը), «Le Museon», LXXI, 1958, 1—2, p. 51—56.

Հոդվածը նվիրված է Վենետիկյան Մխիթարյանների Մատենադարանում պահվող ճառերտրին, որը պարունակում է Եվսեբիոս Եմեսացու ճառերի հայերեն թարգմանությունը: Այդ № 1706 գրչագիրը նկարագրված է Բ. Մարգիսյանի կողմից (Բ. Ս ա ռ ղ ի ս յ ա ն, Մայր ցուցակ Հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, 1924, հատ. Բ, սյունակներ 565—574), սակայն վրիպել է ինչպես E. M. Buytaert-ի, այնպես և Ն. Ակինյանի ուղղորդությունից, որոնք հատկապես զբաղվել են այդ հեղինակով: Վենետիկի ձեռագիրը ընդօրինակված է Նոր-Ջուղայի № 110 գրչագրից: Հրատարակելով մի քաղվածք Վենետիկի ձեռագրից (կցելով այն ֆրանսերեն թարգմանությանը) հեղինակը ցույց է տալիս, որ ընդօրինակությունը կատարված է ամենայն հավատարմությամբ:

¹ School of Oriental and African Studies, University of London, Calendar for the Forty-third Session, 1958—1959, էջ 86—87:

26 հանդես № 2—3

T. E. Eriksson, Die Armenische Büchersammlung der Universitäts Bibliothek zu Helsinki (Հելսինկիի համալսարանի գրադարանի հայերեն գրքերի ժողովածուն), «Studia Orientalia», VIII, 2, 1955.

Շնորհիվ այն հանգամանքի, որ XIX դարում Հելսինկիի համալսարանի գրադարանը Ռուսաստանից ստանում էր լույս տեսնող գրքերի պարտադիր օրինակը, հաջողվեց կազմել հարուստ հավաքածուներ, որոնք վերաբերում են սլավոնագիտությանը, ընդգրկում են Ռուսաստանի ազգային փոքրամասնությունների գրականությունը և այլն: Մեծարժեք են հայոց և վրաց գրականության ժողովածուները, որոնք վերջին տարիների ընթացքում կարգի են բերվել և քարտագրվել:

Հայոց ժողովածուն, սակավ բացառությամբ, կազմված է արևելահայ հրատարակություններից և այդպիսով լրացնում է Սովետական Միությանը:

¹ A Neglected Passage in the History of the Caucasian Albanians, B.S.O.A.S., 1957, XIX, էջ 456—468:

² The Albanian Chronicle of Mxitar Gosh, B.S.O.A.S., XXI, 1958, էջ 472—490:

թյունից դուրս գտնվող գրադարանների հավաքածուները, որոնք մեծ մասամբ պարունակում են արևմտահայ գրականություն:

Համառոտակի նկարագրելով և արժեքավորելով ժողովածուն, ներկա աշխատության հեղինակը անցնում է գրքերի նոթագրմանը, ընդ որում հավաքածուն բաժանում է 4 մեծ բաժնի. I. Գրաքարյան գրականություն, II. Հայոց նոր գրականություն, III. Թարգմանական գրականություն և IV. Պարբերականներ, Երկրորդ բաժինը ունի 9 ենթաբաժանումներ, օրինակ՝ բառարաններ, բարբառագիտությունը նվիրված գրականություն, հայոց պատմությանը վերաբերող գրականություն, հայ ժողովրդական բանաստեղծություն և նրան վերաբերող տար-

բեր նյութեր և այլն: Աշխատությունը ունի մանրամասն անվանացանկ և օժանդակ գրականության ցուցակ:

Հիշելով այս կամ այն գիրքը, հեղինակը նշում է նաև այլ, գրադարանում բացակայող հրատարակությունները, բնութագրում է բովանդակությունը, որոշ տեղեկություններ հաղորդում հեղինակի մասին: Աշխատությունն ունի բավական հարուստ գիտական ապարատ:

Նոթագրվող աշխատությունը, դուրս գալով քարտարանի շրջանակներից, լավ ուղեցույց կարող է լինել այն ընթերցողին, որը կգիմի հայալեզու գիտական (և գեղարվեստական) գրականությանը:

Կ. Յ.

V. Minorsky, Studies in Caucasian History, (Ուսումնասիրություններ կովկասյան պատմության մասին), Cambridge, Oriental Series № 6, London, 1953.

Հայտնի իրանագետ Վ. Մինորսկու այս արժեքավոր աշխատությունը բաղկացած է արաբերեն բնագրից (18 էջ) և անգլերեն ուսումնասիրությունից (178 էջ): Բնագրում հեղինակը տալիս է ժէ դարի պատմագիր Մունաջջիմ Բաշու արաբերեն գրած ընդարձակ Պատմության մի հատվածի հրատարակությունը, որը լույս է սփռում թե՛ Աղվանքի և թե՛ Հայաստանի ժ-ժԱ դդ. պատմության վրա: Մունաջջիմ Բաշին այս հասվածի համար օգտագործել է ժԱ դ. վերջի մի պատմագրի աշխատությունը, որն այժմ կորած է: ԺԸ դարում Մունաջջիմ Բաշու աշխատությունը արաբերենից թարգմանվել է թուրքերենի համառոտ ձևով: Այս թարգմանությունը թեպետ և հրատարակվել է, այնուամենայնիվ շատ քիչ է օգնում ծանոթանալու Մունաջջիմ Բաշու արաբերեն բնագրին, որովհետև որոշ տեղերում նա շատ է համառոտված:

Անգլերեն ուսումնասիրության մեջ Վ. Մինորսկին տալիս է հիշյալ արաբերեն բնագրի թարգմանությունը մեկնություններով հանդերձ

և ապա շարադրում է Շադդադյանների մանրամասն պատմությունը:

Աշխատության երկրորդ գլուխը ամբողջությամբ նվիրված է Անիի Շադդադյանների պատմությանը (1072—1199): Այստեղ օտար աղբյուրներից օգտագործվում է գլխավորապես ժԲ դարի արաբ պատմագիր Ալֆարիկին (որի աշխատությանն է նվիրված Մինորսկու մի բովանդակալից հոդվածը¹), իսկ հայ պատմագիրներից Մինորսկու գլխավոր աղբյուրը Վարդան Արևելցին է:

Անին մայրաքաղաք դառնալուց հետո չորս դար գոյություն ունեցավ: Նրա պատմության ուղաջին շրջանը (Բադրատունյաց) համեմատաբար լավ է ուսումնասիրված, իսկ Շադդադյան տիրակալության շրջանը մինչև այժմ կարոտ էր լուրջ ուսումնասիրման և ահա Մինորսկու այս նոր աշխատությունը գալիս է լրացնելու այս պակասը: Հեղինակը իր աշխատությունը շարագրել է՝ օգտագործելով բազմալեզու աղբյուրներ: Ինչպես հայկական և վրացական (թարգմանաբար), այնպես և արաբական ու պարսկական աղբյուրները (բնագրերով):

Ա. Տ.—Ղ.

¹ Ա. Տ. և Ղ. Ն. Ղ. ի մ, Սահայիֆ ալ-Ախբար, Կ. Պոլիս, 1858:

¹ Caucasica in the History of Mayyafariqin, Bul. of the Sch. of Or. and Afr. St., 1949, XIII.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՍՏԻՑ

«Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությունը Պրագայի համալսարանի պրոֆեսոր, հունական գրականության մասնագետ Ն. Մառտիրոսյանից ստացել է մի նամակ՝ Հոմերոսի «Իլիական» և «Ոդիսական» վիպերգությունների աշխարհարար բարգմանության տարիվ, որ և տպագրում ենք:

ՀՈՄԵՐՈՍԻ «ԻԼԻԱԿԱՆ» ԵՎ «ՈԴԻՍԱԿԱՆ» ՎԻՊԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Հոմերոսյան «Իլիական» և «Ոդիսական» հնուց ի վեր իրենց վրա հրավիրած են շատ մեծ ազդերու գրագետներուն ուղղորդությունը և XVIII դարեն սկսյալ թարգմանված են այս երկու վիպերգությունները զանազան եվրոպական և ասիական լեզուներով: Հայերը, դեռևս վաղուց ժողովրդական ստեղծագործություններու թուրք սիրահար եղած են, ինչպես կվկայեն մեզի մեր քերթողահայր Մովսես Խորենացիի կողմի դրի առնված ու իր «Պատմութիւն Հայոց» գրքին միացված ժողովրդական հնագույն ավանդությունները, առասպելները և զրույցները: Հայերը կրցած են գնահատել Հոմերոսյան վիպերգությունները և հայերեն թարգմանած են դեռևս երկար դարեր առաջ: Նոր ժամանակներում հոմերոսյան գլուխ գործոցները՝ «Իլիական» և «Ոդիսական» վիպերգները թարգմանվել են գրարար լեզվով ասկե 115 տարի առաջ: «Իլիականի» առաջին գրարար թարգմանությունը կատարած է Եղիա Թովմաճյանը 1843-ին և «Ոդիսականը» հայացուցած է Նույնպես վերոհիշյալ թարգմանիչը 1848-ին, հին հունարեն տեքստեն: Արսեն Բագրատունին ալ գրաբարով թարգմանած և երկու անգամ լույս ընծայած է «Իլիականը» Վենետիկի Մխիթարյաններու ծանոթ տպարանեն: Հոմերոսի այս պոեմը («Իլիականը») լույս տեսած է երրորդ անգամ Սան Լազարոյի Մխիթարյաններու տպարանեն, աշխարհաբար, հարուստ ու ճկուն արևմտահայերենով, Հ. Արսեն Ղազիկյանի հաջող թարգմանությամբ: 1955-ին Հայպետհրատը Երևանի մեջ լույս ընծայած է դասական լեզուներու (հին հունարենի և լատիներենի) հմուտ պրոֆ. Համազասպ Համբարձումյանի կողմի կատարված «Իլիականի» հայերեն թարգմանությունը, որ առաջին է արևելահայ գրականության մեջ և առանց վարանումի կարելի է ըսել, որ մինչև հիմա կատարված թարգմանություններու թագուհին է:

Հայաստանի Գիտություններու ակադեմիայի հրատարակչությունն ալ 1958-ին տպագրեց ու հրապարակ հանեց Հոմերոսի երկրորդ հերոսավեպը՝ «Ոդիսականը», որուն անգուցական թարգմանությունն ալ Հ. Համբարձումյանին կտարտիք, որ, ինչպես կերևի, բազմահմուտ ու համայնագետ բանասեր մըն է:

Հոմերոսի զույգ դյուցազներգություններուն՝ «Իլիականի» և «Ոդիսականի» հայերեն թարգմանությունը, որ մեծ ձեռնհասությամբ գլուխ հանած է մեր բազմավաստակ հայրենակիցը Հ. Համբարձումյանը, գրեթե համազոր է հունական բնագրին, որովհետև լրիվ կարտահայտե հին հունարենով խմբագրված տեքստին հոմերոսյան աստվածային ոճը, պերճապաժառ ու ճկուն լեզուն, բառապաշարային ճոխությունը, կշռույթը, երաժշտականությունը, վսեմական կիրքը, հուզումները, դեմքերն ու դեպքերը, ներուրանգ պատկերները, դիցերու և դյուցազներու դյուրթանքներն ու րաջագործությունները իրենց բոլոր հատկանիշերով:

Հոմերոսի էպիկական երգերու հայերեն թարգմանության տաղաչափության մասին չեմ կրնար արտահայտվիլ, որովհետև բանաստեղծակուն փափուկ արվեստին տեղյակ չեմ:

Որքան գիտեմ՝ Հոմերոսի զույգ դյուցազնավեպերը, որոնք գրական և պատմական մեծարժեք երկեր են, հեքսամետրով գրված են, մինչդեռ մեր տրենաչան թարգմանիչը գործածած է մեր ժողովրդի հազներգության հատուկ տաղաչափությունը:

Ամեն պարագայի մեր բանաստեղծ թարգմանիչը իր բեղուն աշխատանքով մեծ նպաստ մը բերած է հայ գրականության հարստացման և հոմերագիտության, որով արժանի է ամեն դովհաստի և գնահատանքի:

Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ (Պրագա)

«Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությունը Մ. Գ. Գրիգորյանից (Ֆելյուր) ստացել է մի նամակ, որի մեջ նամակի հեղինակը մեր Բանի դիտողությունները է անում «Հանդեսի» № 1-ում տպագրված Ա. Գ. Արամյանի «Հայկական մի Բանի ծածկագրություններ» վերծանությունը» հոդվածում Տրդատ Պալյանի ծածկագրի վերծանության վերաբերյալ։

Ստորև տպագրում ենք նամակի համապատասխան հատվածը։

«1. Երրորդ տողի՝ դադարադիր «վզցրգրոլ» բառը պրոֆեսորը վերծանած է իբր «սարլա-րանի»։ Հիրավի, Ստ. Մալխասյանի քառահատոր «Բաղնախոսական բառարանին» մեջ նման բառը գոյություն չունի։ Կր կարծեմ թե զայն պետք է կարդալ՝ վաթմարանի։

2. Չորրորդ տողի «վրբիլ շեցքիլ-սրահի շենքիլ» վերծանությունը քիչ մը տարօրինակ է։ Լեզվի տրամաբանական է «շեցքիլ» բառը լուծել որպես ներքին։

3. Տաս-տասնակերորդ տողի «երգի» բառի և հաջորդողովորդ իմաստ չի տալ։ Եթե ասիկա

(Երգի) զտալ վերծանենք՝ հավանաբար ճիշտ ըլլալ։

4. Տասնակերորդ տողի «բրբ» բառը, պրոֆեսորին կողմից «բարի» կարդացված, կրնա «փա (յ) տլ» ալ ըլլալ։

5. Տասներեքերորդ տողի «թեր» բառը չոր պրոֆեսորը լուծած է իբր քլ(պ)լտ, հավանաբար քլ, ել է։

6. Հստ ինծի, տասնորսերորդ տողի «գյուրբի» ծածկագրությունը այնչափ կարդալով լի է ճիշտ պիտի ըլլա՝ քան այնքան։

Մեսրոպ Գ. Գրիգորյան»

Ստորև տպագրում ենք Ֆրանսիացի լեզվաբաններ Ֆրեդերիկ Ֆեյդիի և Ժան Ֆուրկեի նամակները՝ ուղղված պրոֆ. Ա. Ղարիբյանին նրա «Հայ բարբառագիտական հետազոտություններ» հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում (Պատմա-բանասիրական հանդես, 1958, № 1) հոդվածում առաջ քաշված հայերենի բաղաձայնական տեղադրումի հարցի վերաբերյալ։

Փարիզ, փետրվար, 9, 1959

Առ պրոֆ. ԱՄԻՆՅԱՆ, Երևան

Հարգելի արհեստակից,

Ինչ աղվոր անակնկալ եղավ ինծի համար Ձեր հոդվածը։

Արևմտյանի մեջ, հնդեվրոպական լեզուներու համեմատական քերականության մասնագետները, հայերենի հնչյունաբանությունը ճանշանով միայն գրաբարի պաշտոնական տառագրածության միջոցով և արևմտահայերենի հնչյունը համարելով պարզապես իբրև գրաբար լեզվին առողջանության աղավաղում, բոլորովին ալ անտեսելով նույնիսկ Կ. Պոլսո ժողովրդական բարբառին հնչյունները, ամբողջովին սխալ այն եզրակացության հանգած են, որ այլափոխությունները տեղի ունեցած են ուղղակի հնդեվրոպական քարառեն զեպի գրաբարը, և, երկրորդ փուլով մը, գրաբարեն մինչև արևմտահայերեն։ Միշտ կզգուշացնեի աշակերտներս այս եզրակացություններն, բայց այստեղի այս սրբազանված վարդապետության դեմ պայքարելը անկարելի էր զայն տարածողներուն հեղինակության պատճառով։ Արդեն ես չէի կրնար հատարյալ կերպով ապացուցանել իմ տեսա-

կետս, որը կմնար հազիվ ավելի քան ընդգրկական զգացում մը, համությունս սահմանափակ ըլլալով գաղափարաբաններուն հնչարանության նկատմամբ։ Այսուհանդերձ, նախազգացումն ունեի, որ լեզվագիտական լուրջ ուսումնասիրություն մը հայ բարբառներուն (որոնք արևմտյան կողմերուն մեջ ավելի մասնակի այլափոխության ենթարկած են հնդեվրոպական հնչյունները, քան թե արևելյան նահանգներուն մեջ) օր մը ապացույց պիտի բերեր, որ հայոց նախապատմական ուղղությունը եղած է արևմուտքեն զեպի արևելք։ Այս գիտական ապացույցը Դուք բերիք, որով համար անվերապահ կերպով կշնորհավորեմ Ձեզ։

Նույնպես ատեն մը ի վեր կփնտրեի Ֆրանսայի մեջ գաղթած հայերու բերնեն այդ նշանավոր հնչյունը, որ ականջիս զարկած էր. բայց հստակ կերպով հնչողներ գտնելը դժվար էր։ Կրնար երևակայել զոհացումս, երբ որ Ձեր զրածին մեջ գտա հեղինակավոր հաստատումը այս բոլոր իրականություններուն։ Փառքը Սովետական Հայաստանի գիտության։

Շնորհավորությամբ և հարգանք

մեամ Ձերդ Ֆրեդ. Ֆեյդի

(Արևելյան կենդանի լեզուների Լեզգային գրաբարի պրոֆեսոր, հայագետ)

¹ Տողահամարները վերաբերում են «Պատմա-բանասիրական հանդեսի» 1958 թ. № 1-ի էջ 186-ում ծածկագրի վերծանման տողերին։

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺՐ

Բոլոր բարբառներին ընդհանուր երևույթ է կոմպարատիստների հնդեվրոպական *p, *t, *k խուլ հնչյունների շնչեղացումը, որից էլ ph, th, kh:

Սկզբում շնչեղացումը անհրաժեշտորեն մի տեղանք գիծ չէր. իրոք ph, th, kh հնչյունները միակ խուլ հնչյուններն են այն սիստեմի, որն ունի ևրկու շարք ձայնեղներ (պարզ և, d, g, և շնչեղ bh, dh, gh):

Ձայնի բացակայությունը տարբերիչ բնութագիրն է շնչեղների միակ շարքի համար և շնչեղացումը կարող է լինել երկրորդական հետևանք կոկորդի մասնակցությամբ խուլերը զրսևորելու ընթացքում:

Փոքր Հայքի սիստեմը (1) հետևյալ տիպի է. (dh : d) : th

Սա բոլորից ավելի պահպանողականն է. հրեա-չագիրտներն սա բնորոշվում է նույն շարքերով, ինչ որ նախնական հնդեվրոպականը՝ ներկայացված հետևյալ կերպ.

(dh : d : t)

ա) Սիստեմը կարող է վերածվել երկու շարքի՝ երկու տիպի ձայնեղների միաձուլման հետևանքով, մի հաճախակի երևույթ, որ վկայա-ված է իրաներենում, սլավոնական և բալթի-կան լեզուներում հետևյալ տիպով.

d : th

Դա երրորդ խմբինն է (արևմտյան): Այս-տեղ, հավանաբար, դարձյալ ձայնեղի և խուլի հակադրությունն է, որը մշտական է: Սակայն եթե շնչեղացումն է, որ դառնում է տեղական հատկություն՝ ապա ձայնեղացումը ձգտում է ջնջվել, որտեղից էլ առաջանում է հետևյալ տիպը.

t : th

որ բնորոշ է Ծ-րգ խմբին:

բ) Փոքր Հայքի տիպի մեջ ձ մնում է մարուր ձայնեղը. խուլերի տարբերականները նրա ինքնությունը վտանգի տակ չեն գնում, ուստի զարմանալի չէ գտնելու հետևյալ տիպը.

dh : d, t : th (Չ-րգ խումբ):

(Պարզ է, որ 1-ն որը գտնվում է միայն բառակերպին, և ձ-ն իրար լրացնող բաշխման մեջ են և կազմում են մեկ հնչյուն):

t : th խուլերի միջև շնչեղացման հակա-դրության վերջնական կազմավորումից հետո՝ շնչեղ ձայնեղը մնում է միակ ձայնեղը, և ձայ-նեղությունը դառնում է իր տեղական հատկու-թյունը:

Այսպիսով առաջանում է դառնական հայերե-նի սիստեմը.

d : t : th

Սա նույնն է գերմանականի հետ նախքան նրա ձայնեղների և շնչեղների թուլացումը դեպի հազադայինները:

d : t : th

ծ : t : p

գ) Գոյություն ունի նաև բոլորովին տար-բեր մի բարեշրջություն՝ բնորոշ այն երևույթով, որ շնչեղ ձայնեղի և պարզ ձայնեղի հակադրու-ման մեջ շնչեղ ձայնեղն է, որ ապաձայնեղա-ցել է, մինչդեռ պարզ ձայնեղը պահպանում է իր ձայնեղ բնույթը:

Այստեղ հիշեցվում են հնդեվրոպական այն ճյուղերը, որտեղ շնչեղները ներկայացվում են խուլերով՝ հունական (ϕ, θ, τ, κ) և իտալական:

Այն ստադիայում, երբ երկու ձայնեղների սպառնում է միաձուլում, շնչեղ ձայնեղի ար-տաբերության ժամանակ կոկորդային ճիգի ան-կայունության հետևանքով շնչեղի նվազ ձայ-նեղացումը կարող էր եղած տարբերությամբ, առաջա-սասած, փրկել՝ մղելով նրան զարգանա-լու դեպի ձայնեղի և խուլի հակադրությունը. սա «կիրիկյան» տիպն է (4):

t : d : th

դ) Ձայնի էլ ավելի նկատելի բացակայու-թյունը կտաներ դեպի պարզ խուլերից առաջա-ցած շնչեղ ձայնեղների և շնչեղ խուլերի պարզ և հստակ միաձուլումը:

Հենց այդ միաձուլումն է, որ մենք գտնում ենք Ծ-րգ խմբի մեջ:

d : th (c. e. t, dh)

(dass : thur, thor — c. eur. *dek, dhur, *tor).

Այսպես կարող էինք մենք հանգել հայոց լեզվի ներքին տարբերական բացատրությանը՝ ելնելով երկու սկզբնական բնորոշ հատկանիշ-ներից.

ա. նրա պատկանելիությունից մի տիպի, որտեղ խուլ պայթականների արտաբերմանը ընկերակցում է շնչեղացումը: Դա հայերենը մո-տեցնում է կելտերենին և գերմաներենին. (կել-տերենը կարելի է մոտեցնել 3-րդ տիպին, գեր-մաներենը՝ դասական տիպին):

բ. կոմպարատիստների bh, dh, gh հնչյուն-ների ձայնեղ և խուլ արտաբերումների միջև գտնվող սահմանի վրա լինելու դիրքից:

Սա համաձայնում է հայերենի «կենտրոնա-կան» դիրքին (տե՛ս Meillet, Dialectes indo-europeens):

Եթե այս տեսակետները հաստատվեն, հա-յերենը կդառնար մի զարմանալի փորձադաշտ՝ ուսումնասիրելու համար հնդեվրոպական պայ-թականների սիստեմի հնարավոր էվոլյուցիա-ները:

Յուրեկ

(Փարիզի համալսարանի պրոֆեսոր)